**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ----------  2026թ.** **N------Ա**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԺԻՐԱՅՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն հայ կինոռեժիսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ժիրայր Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոցի հ. 36 հասցեում փակցնելու համար:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԺԻՐԱՅՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ժիրայր Ավետիսյանը ծնվել է 1927 թվականի հոկտեմբերի 22-ին, Էջմիածնում:

1947 թվականին ավարտել է Երևանի մանկավարժական ուսումնարանը, 1953 թվականին՝ Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը:

1956 թվականից աշխատել է Հայկական հեռուստատեսությունում և հեռուստաֆիլմերի «Երևան» ստուդիայում: Հայկական հեռուստատեսության հիմնադիրներից է:

Ժիրայր Ավետիսյանն առաջիններից էր, որ մտել է հեռուստատեսություն:

Նրա անմիջական մասնակցությամբ են եթեր հեռարձակվել Հայաստանի հեռուստատեսության առաջին հաղորդումները՝ ամանորյա հանդեսը 1957 թվականի հունվարի 2-ին, գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի կյանքին և գործունեությանը նվիրված հաղորդումը և այլն:

Հայկական հեռուստատեսության առաջին բազմապլան ներկայացումներից մեկի՝ «Մարդու ճակատագրի» հաջողությունը մեծապես պայմանավորված էր նաև Ժիրայր Ավետիսյանի մասնագիտական մոտեցումներով: Ռեժիսոր Մարատ Մարինոսյանը ներկայացման մեջ օգտագործել էր Ժիրայր Ավետիսյանի արտաստուդիական կադրերը՝ բնության պատկերներով: Սրանք հեռուստատեսության առաջին կինոնկարահանումներն են:

Նրա նկարահանած առաջին կինոնկարը, որը նաև հայկական հեռուստատեսության առաջին հեռուստաֆիլմն է, «Առաջին նամակը» վերնագրով մի ակնարկ է եղել գիշերօթիկ դպրոցների մասին, իսկ նրա առաջին բեմադրությունը՝ «Դեպք անտառում», մանկական էր, որտեղ խաղում էին Խորեն Աբրահամյանը և Իշխան Ղարիբյանը:

1958 թվականին բեմադրել է հայկական առաջին խաղարկային հեռուստաֆիլմը՝ «Դեպի բարձունքներ», որը նվիրված էր դպրոցականներին:

«Քայլեր» ֆիլմը (ըստ Ա. Լիյվեսի), հայկական հեռուստատեսության առաջին լիամետրաժ գեղարվեստական կինոնկարն է: Նշանակալից է, որ գլխավոր դերում առաջին անգամ նկարահանվել է ապագա նշանավոր կինոդերասան Արմեն Ջիգարխանյանը, ինչպես նաև Վարդուհի Վարդերեսյանը, Հ. Հովհաննիսյանը, Գ. Հարությունյանը:

Բեմադրել է երեսունից ավելի փաստագրական և խաղարկային ֆիլմեր, որոնցից հեռուստադիտողին քաջ ծանոթ են «Ձորի Միրո» (ըստ՝ Մուշեղ Գալշոյանի), «Ջրհորի մետ» (ըստ՝ Ստեփան Զորյանի), «Շրթներկ համար 4» (սցենար՝ Ժորա Հարությունյան), «Պոեմ հերոսական» (սցենար՝ Արշալույս Սարոյան):

Ժիրայր Ավետիսյանը հազվագյուտ գործիչներից է, ում անունով փողոց է անվանակոչվել կենդանության օրոք (ՀՀ, ք.Թալին):

Մահացել է 2011 թվականի հոկտեմբերի 8-ին:

Հայ կինոռեժիսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ժիրայր Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոցի հ.36 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Սոնա Ավետիսյանի կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**